

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 L.Ո. 75ԳԳ ՏԱԲԻ, ԹԻԻ 98 (21148) ՇԱԲԱԹ, 6 ՅՈՒՆԻՍ 2002 10 ԷՁ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

«ՆՈՅԵՄԲԵՐ 17»-Ի ԱՆԴԱՆՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

ԱթԷՆք, 5 (ՌՈՅԹԸՐԶ)։- Յունաստան Ուրբաթ օր լոյս յայտնած է, թէ պիտի կարենայ «Նոյեմբեր 17» խմբակի այլ անդամներ ձերբակալել, անոր գլխաւոր քարտուղը գտնելէ եւ կասկածելի մը ձերբակալելէ ետք։
Որեւէ ձերբակալութիւն մեծ իրագործում մը պիտի ըլլայ Յունաստանի իշխանութիւններուն համար, որոնք մինչեւ այս շաբաթ չէին գտած ինքնութիւնը, ձերբակալած, դատած կամ պատժամիջոցի ենթարկած խմբակի ռեւի մէկ անդամը։
Իշխանութիւնները տակաւին կը հարցաքննեն ձերբակալեալ Սաւաս Չիրաքի բարեկամներն ու պարագաները։ Ան Շաբաթ օր Փիլիպ Կալապիտի մէջ ձերբակալուածի ձայնը փորձի մը դիմած էր։
Վարչապետ Կոսթաս Սիմիթիս յայտնած է, որ ոստիկանութեան տարիներու աշխատանքը կ'ընթացի արդիւնաւէտ եղանակով։

ՅՐԱՆՍԱ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ԻՐ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆԸ

Յրանսայի արտաքին գործոց նախարար Տոմի-նիք Տը Վիլֆրէն երէկ Պէյրութ ժամանեց՝ միջին արեւելեան իր շրջապտոյտին առաջին հանգրուանը։

Յրանսական դիւանագիտութեան պետը կէսօրէ ետք Պէյրութ ժամանեց եւ անմիջապէս ուղղուեցաւ Պապատայի նախագահական պալատ, ուր տեսակցութիւն մը ունեցաւ նախագահ գործիչ Լահուտի հետ։

Նախագահ Լահուտ հանդիպումին ընթացքին բարձր գնահատեց նախագահ ժաբ Շիրաքի կեցուածքներն ու անոր գորակցութիւնը։

Շրջանային եւ միջազգային գործազգուցումներուն առնչութեամբ Լիբանանի կեցուածքները ներկայացնելով՝ նախագահ Լահուտ ըսաւ, որ կարելի եղածին չափ մօտ տեսնեն պէտք է գումարել Միջին Արեւելքի խաղաղութեան միջազգային խորհրդակցութիւնը, որովհետեւ կացութիւնը կը վատթարանայ, իսկ վայրագութիւնը չէ որ կրնայ լուծել արաբեկիստային եւ տազնապը, այլ՝ միջազգային որոշումներու



Նախագահ Լահուտ կ'ընդունի Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը

գործազգուցութիւնը։

Ան վերահաստատեց, որ Լիբանան կը մերժէ պաղեստինցի գաղթականներու ընկալմանը եւ արաբական երկիրները առկա կեցուածքը որդեգրած են իրենց վաւերացուցած խաղաղութեան նախաձեռնութեան մէջ։

Քննարկուեցան Լիբանանի տնտեսական վիճակն ու գաշն բարելաւելու համար ի գործ դրուած ճիգերը, ինչպէս նաեւ երկրին ապահովութիւնը, որ կարելի դարձուց արաբական եւ մի-

ջազգային ժողովներու Լիբանանի մէջ գումարումը։ Այս ծիրէն ներս նախագահ Լահուտ հաստատեց Լիբանանի մէջ Հոկտեմբերին գումարումը կ'ընդունուի Կազմակերպութեան վեհաժողովին կարեւորութիւնը։

Տեսակցութեան ընթացքին Տը Վիլֆրէն փոխանցեց նախագահ Շիրաքէն պատգամ մը, ուր ան կը վերահաստատէ Ֆրանսայի յանձնառութիւնը՝ օժանդակելու Լի-

Շարք՝ էջ 10

ՀԱԿԱՌԱԿ ԷՖ. ՊԻ. ԱՅ.Ի ՅԵՐԲՈՒՄՆԵՐՈՒՆ

«ԷԼ ԱԼ»-Ի ԳՐԱՍԵՆՏԱԿԻՆ ՎՐԱՅ ԶԻՆԵԱԼ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԱՇԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ ԿԸ ԸԱՄԱՐՈՒԻ ԹԵԼ ԱԻԻԻ ԿՈՂՄԵ

Իսրայէլ երէկ յայտարարեց, որ Լոս Անձելիսի օդակայանին մէջ «Էլ Ալ»-ի գրասենտակին դէմ յարձակումը կատարողին եզրակացի ըլլալը կը փաստէ, որ գործողութիւնը ահաբեկչական արարք մըն է։

ԷՖ. Պի. Այ. երէկ յայտնեց, որ գործողութիւնը կատարողը 41 տարեկան Հիշամ Մոհամէտ Հատայէթն է, որ 1992ին ի վեր Միացեալ Նահանգներ հաստատուած եզրակացի մըն է։ ԷՖ. Պի. Այ. նաեւ հաղորդեց, որ Հատայէթի անունը չի գտնուիր ահաբեկիչներու ցանկին վրայ, եւ թէ ոչ մէկ փաստ գոյութիւն ունի թէ անոր կատարածը ահաբեկչութիւն է։ Սակայն Իսրայէլի փոխադրամիջոցներու նախարար Էֆրայիմ Մնէ յայտնեց, որ հրէական պետութիւնը ահաբեկչական պիտի նկատէ արարքը, մինչեւ որ հակառակ փաստուի։ Ան աւելցուց, որ պիտեալին որ երկրացի ըլլալու յայտարարութիւնը աւելի կը հաստատէ Իսրայէլի կասկածները։ ԷՖ. Պի. Այ.ի առաջին յայտարարութիւնը կ'ըսէր, որ ահաբեկչական բնոյթ ունենալու փաստեր չկան։ Յայտարարութիւնը կը նշէր նաեւ, որ պիտեալը առանձին գործած է։

Չինեալը կրակ բացած էր «Էլ Ալ»-ի գրասենտակին վրայ՝ երկու հոգի սպաննելով։ Ընկերութեան ապահովութեան անձնակազմէն մէկը իր կարգին սպաննեց պիտեալը։

Միւս կողմէ, «Էլ Ալ»-ի օդաչու մը յայտնեց, որ Թէլ Աւիւն Մոսկուա թռիչքի մը պահուն (Հինգշաբթի օր) հակօդային հրթիռի մը պայթումը նկատած է Ուքրանիոյ վերեւ։ Ուքրանիոյ պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարեց, որ ամիսներէ ի վեր հրթիռներու փորձարկում չէ կատարած։ Իսրայէլի փոխադրամիջոցներու նախարարը՝ Մնէ ըսաւ, որ իսրայէլեան օդանաւը չէ վտանգուած։ Ան անհաւանական նկատեց, որ օդանաւը յարձակումի թիրախ



ԷՖ. Պի. Այ.ի գործակալներ Հատայէթի բնակարանէն կը փոխադրեն իրեր եւ կազմածներ գանձը քննութեան ենթարկելու համար

եղած ըլլար։ Իսկ Ուքրանիոյ նախագահ Լէոնիտ Բուչմա «անիմաստ» նկատեց ուքրանական հրթիռի մը պայթումին գծով հրապարակուած լուրերը։ Մնէ, իր կարգին, ըսաւ, որ օդաչուն փորձառու ու վստահելի մէկն է, որ չի կրնար երեւակայած ըլլալ հրթիռին պայթումը։

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒԺԵՐԸ ՇՈՒՏՈՎ ՊԻՏԻ ԶՇՆՈՒՄԱՆ ԱՅՐԱՅՈՐԴԱՆԱՆԵՆ

Իսրայէլեան բանակի հրամանատար Շաուլ Մոֆապ երէկ հրապարակուած հարցազրոյցի մը

Շարք՝ էջ 10

ԹՈՒՐԵՒԱ

ՀԻՒԱՆԴ ԷՃԵԻԹ ՊԻՏԻ ԶՅՐԱԺԱՐԻ

ԱՆԳԱՐԱ, 5 (ՌՈՅԹԸՐԶ)։- Թուրքիոյ հիւանդ վարչապետ Պիլիքնի Էճեիթ Ուրբաթ օր յայտնած է, թէ որեւէ ծրագիր չունի հրաժարելու, մինչ շահարկողներու կողմէ անոր կատարական ընկերակցութեան վրայ ճնշումները թափ կը ստանան՝ վերջ տալու համար քաղաքական անորոշութեան, որուն պատճառը 2 ամիսէ ի վեր վարչապետին պարտականութիւններէն հեռու ըլլալն է։

Թղթակիցներու հարցումներու գրաւոր պատասխանին մը մէջ, ան յայտնած է, որ իբրեւ վարչապետ իր պարտականութիւնը կը կատարէ եւ «կարիքը չկայ պիս փոխարինող մը գտնելու աշխատանքներուն ձեռնարկելու»։

Կարգ մը մեկնաբաններ եւ տեղական մամուլը իրենց ձայնը միացուցած են ընդդիմադրութեան՝ կոչ ուղղելով Էճեիթի, որ հրաժարի, վերջ տալու համար սակարանային շուկաներու անկումին, որուն պատճառը կանխահաս ընտրութիւններու եւ կառավարական ընկերակցութեան շարքերուն մէջ երկփեղկումի մը գծով մտավախութիւններն են։

Անցնող քանի մը օրերուն, թրքական լիբան մրցանիշ կտրող անկում արձանագրած է։

Դրամական Միջազգային Ֆոնտը, որ անցեալ տարուան ելեւմտական տազնապէս ի վեր վճարած կամ խոստացած է 31 միլիարտ տոլարի հասնող փոխառութիւններ, յայտնած է, թէ քաղաքական ղեկավարները յաւելեալ քայլերու պէտք է դիմեն շուկաներու մտավախութիւնները փարատելու համար։

Փոխ վարչապետ Մետուք Երլմազ Ուրբաթ առաւօտուն թղթակիցներու ըսած է, թէ Էճեիթ պէտք է առողջական իր ներկայ վիճակը յստակացնէ։

Էճեիթը հերքած է թերթերու այն տեղեկագիրները, թէ Երլմազ Հինգշաբթի օր կատարութեան ղեկավարներու մէկ ժողովին իրմէ պահանջած է, որ փոխանորդ մը նշանակէ, մինչ թուրքիա ճիգեր ի գործ կը դնէ Դրամական Միջազգային Ֆոնտին հետ 16 միլիարտ տոլար արժողութեամբ նորագոյն համաձայնութեան պայմանները ամբողջացնելու համար։

ՊԱՂՏԱՏ - ՄԱԿ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԱԽՈՂԵՑԱՆ

Պաղտատի դէմ ամենաբնական յարձակումի մը հաւանականութիւնը ծանր ճնշումի կ'ենթարկէ Իրաքը, որպէսզի արտօնէ ՄԱԿի գեներալ քոմիտէին վերադարձը։

Վիեննայի բանակցութիւնները՝ Իրաքի եւ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Աճանի միջեւ, եզրակացութեան մը չյանգեցան եւ համաձայնութիւն մը գոյացնելու յոյսերը ի դերեւ ելան։ Բանակցութիւնները, որոնց կը մասնակցի արտաքին գործոց նախարար Նաժի Մապրի, երրորդ անգամ ըլլալով տեղի կ'ունենային այս տարուան ընթացքին։ Երրորդ փուլի նախօրեակին, Աճան ըսած էր, որ վճռական որոշումներ տեղի կ'արեւի չէ մնայուն բնոյթ տալ բանակցութիւններուն։

Իրաքի դիւանագետ մը ըսաւ, որ որքան բանակցութիւնները երկարին, այնքան աւելի կը մօտենան տեսակետները։ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը կը պահանջէ, որ Պաղտատ արտօնէ քննիչներուն վերադարձը, որպէսզի ստուգեն հաւաքական քանդումի գեներալ գոյութիւնը։ Իրաք կը պնդէ, որ չունի այդպիսի գեներալ, եւ թէ այդ ուղղու-



Իրաքիցիներ կ'ուճկուրեն լուրերը իմանալու համար բանակցութիւններուն արդիւնքները

թեամբ, որեւէ մտ ծրագիր չունի։ Իրաք կը պատժուած խորհուրդը ջնջէ տասներկու տարի ի վեր հաստատուած պատժամիջոցները։ Մապրի ըսաւ, որ Իրաք տակաւին կը սպասէ Մայիսին ներկայացուցած հարցումներուն մասին պահանջուած լուսաբանութիւնը։

Միջ այդ, Ուաշինգթոնը թափ տուած է Իրաքի դէմ զինուորական գործողութեան մը սպառնալիքին։ «Նիւ Եորք Թայմզ»-ի կողմէ հրապարակուած լուրի մը համաձայն, Փենթագոնը պատրաստած է Իրաքի դէմ յարձակումի մը ծրագիրը, որուն գործադրութեան պիտի մասնակցին տասնեակ հազարաւոր զինուորացիներ (ՌՈՅԹԸՐԶ)

«ՀԻՐՐԻՅԷԹ»-Ի ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ՝ «ՀԱՅ - ԹՐԲԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ»-ԻՆ ՄԱՍԻՆ

Թուրքիոյ մէջ հրատարակուող «Ակօս» թերթը վերջերս հարցազրուեց էր, թէ «Հայ - Թրքական Հաշտութեան Յանձնաժողովը» քանի մը ամիս իր աշխատանքներու ընդմիջումէն ետք պիտի վերսկսի իր աշխատանքներուն՝ Յուլիս 11էն 13 հանդիպում մը գումարելով թրքական Պոտրուլ քաղաքին մէջ։

Թրքական «Հիւրիք» թերթը, անդրադառնալով վերջին շրջանին Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու զարգացման ուղղութեամբ տարւող քարոզարշաւին, նշեց, որ այս մէկը նոր նախադրեալներ կը ստեղծէ «Հայ - Թրքական Հաշտութեան Յանձնաժողով»-ի աշխատանքներուն վերսկսման համար։

Ըստ «Հիւրիք»-ի, յանձնաժողովը իր գործունէութիւնը կ'արդիւնեցնէ էր «Երբ հայ անդամները, ի դէմ Հայկական Ցեղասպանութեան վերաբերել թրքական կողմին անգիղղ կեցուածքին, որոշեցին դուրս գալ յանձնաժողովէն»։

ՅՐԱՆՍԱՅԻՆԵՐՈՒՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ ՉԻ ՎՍՏԱՀԻՐ ԺԱԲ ՇԻՐԱՔԻ

ՓԱՐԻՉ, 5 (ՌՈՅԹԸՐԶ)։- Ֆրանսացիներու մեծամասնութիւնը հաւատք չունի նախագահ ժաբ Շիրաքի քաղաքականութեան հանդէպ, ըստ Ուրբաթ օր հրապարակուած հարցախոյզի մը արդիւնքներուն։

«Լը Ֆիկար» թերթին համար «Սոֆրէս» ընկերութեան կազմակերպած հարցախոյզը ցոյց տուած է, որ հարցապնդողներուն 51 առ հարիւր վստահութիւն չունի երկրին հարցերը լուծելու ժաբ Շիրաքի կարողութեան վրայ։ Ամիս մը առաջ, համեմատութիւնը 48 առ հարիւր եղած է։ 47 առ հարիւր վստահութիւն արտայայտած է։ Վարչապետ ժաբ Փիլիպ Ռաֆարէն 58 առ հարիւր վստահութիւն ապահոված է (ամիս մը առաջ 2 առ հարիւր աւելի եղած է), սակայն այս համեմատութիւնը տակաւին բարձր կը նկատուի ֆրանսացի ղեկավարի մը համար։

Շիրաք Մայիս 5ին վերընտրուած էր քուէներու մրցանիշ կտրող 82 առ հարիւրով՝ նկատուին ստանալով, որ ձախակողմեաններ անոր Վորապիկ կանգնած էին ծայրայեղ աջակողմեան ժաբ-Մարի Լը Փէնի դէմ։

ՆՈՐԸՆՏԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱՄ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Կարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովները սկսան իրենց աշխատանքներուն:

Անցնող շաբաթ տեղի ունեցաւ Կրօնական Ժողովին անդրանիկ նիստը, նախագահութեամբ Արամ Ա. կաթողիկոսի: Ժողովը ընտրեց իր դիւանը յանձինս Չարեհ արք. Ալմառեանի՝ ատենապետ եւ Գրիգոր վրդ. Չիֆթեանի՝ ատենադպիր: Կրօնական Ժողովին՝ քննարկման առարկայ դարձաւ յառաջիկայ աշխատանքներուն ծրագիրը, որ վաւերացուցաւ:

Քաղաքական Ժողովը եւս իր անդրանիկ նիստը գումարեց անցնող շաբաթ Արամ Ա. նախագահութեամբ եւ իր դիւանին ընտրութիւնը կատարեց հետեւեւէլ կերպով. - Անտրեթապտրեան՝ ատենապետ, Ոսկերեան Արզումանեան՝ փոխ ատենապետ եւ Յոյակ Թիթեւեան ատենադպիր: Քաղաքական Ժողովը եւս իր գործունէութեան ուղեցոյցը պատրաստեց ու վաւերացուց:

Յառաջիկայ շաբաթ տեղի պիտի ունենայ Ազգ. Կեդրոնական Կարչութեան խառն՝ Կրօնական ու Քաղաքական Ժողովը, որուն ընթացքին պիտի համադրուին աշխատանքային երկու բնագումարներու ծրագիրները եւ գործադրութեան դրուին:

Յայտնենք, որ Ազգ. Կեդրոնական Կարչութեան աշխատանքային ծրագիրին մէջ յատուկ կարեւորութիւն պիտի տրուի կաթողիկոսարան - թեմ յարաբերութեանց, կրօնական դաստիարակութեան, երիտասարդական շարժումներուն, հայ եկեղեցւոյ բարեկարգութեան կապեմ հարցերուն, միջեկեղեցական յարաբերութեանց կարգաւորման, կաթողիկոսութեան մշակութային տարբերութեան ծառայման, ընկերային ծառայութեան առաւել կազմակերպման եւ հայ ժողովուրդի իրաւունքներուն հետապնդման առաջնահերթութիւններուն:

ԳՈԿՏ. ԳԱԼԵԱՆ

ԴԱՍԱԽՕՍԵՅ ՊԻՔՏԱՅԱՅԻ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Ընդառաջելով Արամ Ա. կաթողիկոսի հրաւերին՝ 4 Յուլիս 2002ի երեկոյեան ժամը 7:00ին, դոկտ. Սամուէլ Գալեան դասախօսութիւն մը տուաւ Պիքթայայի դպրեմանքին մէջ: Գալեան, որ ներկայիս նախագահն է Փիթսպըրկի Աստ-աւածաբանական համալսարանին, խօսեցաւ քրիստոնէական եկեղեցիներու ազդու ներկայութեան անհրաժեշտութեան մասին այսօրու ընկերութեան կեանքին մէջ: Դասախօսութեան աւարտին եղան նաեւ հարցումներ, որոնք լուսարանուէցան դասախօսին կողմէ:

Շաբ.՝ էջ 10

ՀԱՐԻՐԻ ԵՒ ՊԵԹԸԸ ԲՆՆԱՐԿԵՑԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ



Դեսպան Պեթըլ կ'այցելէ Հարիրիի

Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսըթ Պեթըլ երէկ այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի, ապա յայտնեց, որ Ուաշինկթըն կը ձգտի, որ Լիբանանի նուիրատու երկիրներու եւ կազմակերպութիւններու Փարիզ-2 խորհրդածոյցը շինիչ ըլլայ:

Պեթըլ նաեւ յայտնեց, որ վարչապետ Հարիրիի հետ խօսած է լիբանանեան տնտեսութեան ապագային մասին Ուաշինկթընի յոյսերուն:

մասին, կորս ներշնչուած են լիբանանեան տնտեսութեան տուած դրական ազդանշաններն ու վարձագումները:

ՀԱՐԻՐԻ Ս. ԱՐԱԲԱ ՍԵԿՆԵՑԱՒ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ գիշեր մեկնեցաւ Մեհուտական Արաբիա, ուր բարձրաստիճան պաշտօնատարներու հետ տեսակցելէ ետք պաշտօնական այցելութիւն մը պիտի տայ Եգիպտոս:

Երէկ Հարիրի ընդունեց այցելութիւնը Լիբանանի մէջ Մեհուտական Արաբիոյ դեսպան Ֆուադ Սատթ Միլթի, որ յայտնեց, թէ քննարկած են այցելութեան վերաբերեալ հարցերը, երկկողմանի յարաբերութիւններն ու շրջանային իրավիճակը:

ԸՍՏ ՍՈՒՍԱՅԻ

ԶԲՕՍԱՇՐՋԱՅԻՆ ԲԱՑԱՌԻԿ ԵՂԱՆԱԿ ՄԸ

Կենսոլորտի նախարար Միշէլ Մուսա երէկ շեշտեց, որ այս ամառ Լիբանան կը պատրաստուի պրօսաշրջային «բացառիկ» շրջան մը ապրելու:

Մուսա յայտնեց, որ Լիբանանի պրօսաշրջային մարզը ալ աւելի պիտի բարգաւաճի կառավարութեան կողմէ քարահատման վայրերու աշխատանքի կասեցման համար տարուած աշխատանքին եւ պրօսաշրջիկներուն տրամադրուելիք Կանադայի դիրութիւններուն իբրեւ արդիւնք:

Մուսա այս գաղափարները արտայայտեց «Չրօսաշրջութեան եւ կենսոլորտի միջազգային եւ արաբական վեհաժողով»ի բացման իր խօսքին մէջ՝ իբրեւ ներկայացուցիչ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի:

ՊԵՏԱԿԱՆ ...

Շարունակուած 2րդ էջէն

ներկայացուց խորհուրդին կատարած աշխատանքները՝ հենարանային կապերն ու հանդիպումները նախ ար ր ն եր Ֆուադ Սատթի, ժան Լուի Քրրտահիի, Նեժիպ Միքաթիի, ինչպէս նաեւ խումբ մը եր ե ս փ ո խ ս ն ն եր ու հ ե տ:

Իր ընթացիկ նիստին ընթացքին խորհուրդը անդրադարձաւ նաեւ կառավարութեան վերջին ժողովին, ուր կրթութեան նախարար Ապտէլ Ռահիմ Մըրատ դուրս ելած էր ժողովէն բողոքելու համար ժողովի ընթացքին իր վրայ բանեցուած ճնշումներուն, որպէսզի չկարենայ հարկ եղած ձեւով քացատրել պետական ուսուցիչներուն պահանջները:

ՀԱՅ ԱՒԵՏ. ՔՈԼԷՃ

(ՄԵՔՍԻՔ ՓՈՂՈՑ, ԴԵՌ. 349816) 2002-2003 ՏԱՐԵՇՐՋԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1.- 2002-2003 տարեշրջանին Հայ Աւետ. քոլէճը պիտի ունենայ բողոքեցն 12րդ պաշալօրէս դասարան:
- 2.- Նորեկ աշակերտները պարտին կանխաւ դիմել: Նորեկներուն դիմումները կ'ընդունուին ամէն օր, կէսօրէ առաջ ժամը 9:30էն 12:30, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:
- 3.- Կրթնապաստի դիրութիւններ կը տրուին ուսումնապէս փայլուն եւ նիւթական դժուարութիւն ունեցող աշակերտներու:
- 4.- Բոլոր շրջաններու համար օթոպիւսի սպասարկութիւնը ապահովուած է:
- 5.- Ամառնային շրջանին դպրոցին գրասենեակը բաց է Յուլիս եւ Սեպտեմբեր ամիսներուն Երկուշաբթիէն Ուրբաթ, իսկ Օգոստոսին բաց է միայն Չորեքշաբթի օրերը:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային Իշխանութեան Ուսումնական Խորհուրդը տնօրէնութեան համար դիմումներ կ'ընդունի, նուազագոյն հետեւեւէլ պայմաններէն մին լրացնող համալսարանաւարտ թեկնածուներէն, որոնք տիրացած են.

1. Կրթական վարիչ մագիստրոս տիտղոսից (M. A. in School Administration) եւ ունին ուսուցչական փորձառութիւն:
2. Համալսարանական պսակաւոր գիտութեանց կամ արուեստից տիտղոսից (B.S./ B.A. in Computer Science or Business) եւ ունին 5 տարուան ուսուցչական փորձառութիւն:

Դիմումները կ'ընդունուին Ազգային առաջնորդարանի մէջ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

5 Յուլիսին լիբանանեան օրաթերթերը իրենց առաջին էջերով լուսարձակի տակ առած են նախարարաց խորհուրդին նիստը եւ Միացեալ Նահանգներու մէջ անկախութեան տօնին նշումը՝ ապահովական արտակարգ եւ խիստ միջոցառումներու ներքեւ:

«Նահար» գրած է. «Նախարարաց խորհուրդի նիստին քաղաքական համախոհութիւն գոյացաւ Փարիզ - 2 ժողովէն առաջ տնտեսական բարեկարգումի նոր քայլեր առնելու»:

Այս առնչութեամբ «Տիար» նշած է, թէ նախարարաց խորհուրդը բուռն բանավեճէ ետք մերժած է Շապուրիի ամբարտակի շինութեան մասին նախարար Պայտունի նոր առաջարկը եւ գործը յանձնած է նախապէս ճշդուած ընկերութեան. ուսուցիչներուն պահանջները անտեսուած են ժողովին կողմէ եւ նախարար Մըրատ դժգոհելով լքած է ժողովը:

«Պայրաք» օրաթերթը գրած է. «Իշխանութեան երեք պետերուն միջեւ փոխադարձ հակացողութեան մթնոլորտը նոր կարելիութիւններ կը ստեղծէ դրական արդիւնքներու հասնելու իմաստով: Նախագահ Լահուտի նախարարաց խորհուրդին յիշեցուց, որ տրուած որոշումները պէտք է գործադրուին եւ աւելորդ պաշտօնեաներու արձակման գործընթացը պէտք է ամբողջանայ»:

Թերթերը նշած են, թէ կրթութեան նախարար Մըրատ կառավարութեան նիստէն քաշուեցաւ՝ բողոքելով իր պահանջներուն նկատմամբ նախարար Սիմիորայի ժխտական կեցուածքին դէմ:

«Տիար» օրաթերթը հարցազրոյց մը ունեցած է մարմնակրթութեան եւ երիտասարդութեան նախարար Սեպուհ Յովնանեանի հետ: Հարցազրոյցին մէջ զխաւորաբար արծարծուած են Լիբանանի մէջ ընտրութիւններու կազմակերպման առնչուող հարցեր եւ ընտրութիւններուն մասնակցողներուն տարիքը տասնութի բարձրացնելու պարագան: Նախարարը նշած է, թէ պատասխանատուները կը խուսափին քուէարկութեան տարիքը նուազեցնելէ, որովհետեւ կը վախնան, որ ընտրութիւններուն մէջ երիտասարդները իրենց վճռորոշ դերը ունենան: Ըստ նախարարին, Հ.Յ.Դաշնակցութիւնը կը նախընտրէ երկու հանգրուանով ընտրութիւն՝ գաւառը ընտրել իբրեւ ընտրատարածք, ապա՝ նահանգը:

Պատասխանելով թղթակիցին այն հարցումին, թէ ինչո՞ւ Հ.Յ.Դաշնակցութիւնը միշտ կառավարութեան կողմը կը դիրքորոշուի, նախարարը րած է, թէ կուսակցութիւնը պետութեան դէմ կը դիրքորոշուի երբ անիկա սխալի: Նախարարը նշած է, թէ կուսակցութիւնը յառաջացուցած է յանձնախումբ մը, որ կը սերտէ յաջորդ ընտրութիւններուն կազմակերպման եւ ձեւին մասին կուսակցութեան դիրքորոշումն ու առաջարկները:

Միջազգային գետնի վրայ թերթերը անդրադարձած են Միացեալ Նահանգներու անկախութեան նշումին:

«Քիֆահ Արապի» գրած է. «Յուլիս 4ի տօնին առիթով, Լուս Անճելլոս վերլիշեց Սեպտեմբեր 1ի յարձակումը. իսրայէլեան «Էլ Ալ» ընկերութեան գրասենեակին վրայ յարձակումի մը ընթացքին 3 անձեր սպանուեցան եւ 4 ուրիշներ վիրաւորուեցան. իսկ անձնական փոքր օդանավ մը տօնը նշող հաւաքոյթի մը վայրին մօտ ջախջախուեցաւ»:

«Նահար» օրաթերթը գրած է, թէ Եգիպտոսի արտաքին գործոց նախարարին հետ տեսուելէ ետք, Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէի յայտարարեց, թէ ճորճ Պուշի վերջին ճառին մէջ կան դրական կէտեր, որոնք պէտք է համադրուին եւ իմբագրուին: Թերթերը նաեւ անդրադարձած են այն երեւոյթին, թէ

Շաբ.՝ էջ 10

ԱՉՅՍ ՏԵՄԱԿ

ՄԱՐՁԻԿ

ԻՍ. ՏԱՐԻ, 2002
ԹԻԻ 5 (239)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ ՀՄ.Ը.Մ.Ի ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

«Մարզիկ»ի այս թիւով տեսնել՝

- Խմբագրական - Անդր Կալեան
- Ամրապնդեք բարոյական արժէքները (ԺՋ) - Յարութ Զեքիճեան
- Արագ աճման սկզբունքը - Կ. Յովհաննէսեան
- Նորութիւններ հայրենի մարզաշխարհէն - Գ.Թ.
- Պատանիները եւ իրենց ընկերները - Ալին Ներսէսեան
- Ակադեմիական արշաւը - Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի արի-արեւոյշ ճիւղեր
- Եղբայր Նապար Գալայճեանի յիշատակին - Կարպիս Գոյումճեան

Թիւր կ'ընդգրկէ նաեւ Համազանցի, մանկապատանեկանի եւ նամակների բաժիններ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական կեանքի անդրադարձներ:

Ստանալու Համար դիմել Համազգայինի գրախանութի: Սակ՝ 3000 լ.ո.

ԼՈՎԱՆՔԻ ՉԵՐ ՄՍՏՀՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓԱՐՍԵՑԷՔ

SHOWER CABINE CENTER

Այլազան մտուցներ, պատրաստ եւ ապարանքի վրայ: Չանազան չափերով կազմուած, ալիւմինիում եւ փլասթիկ Ս. P. V. C. եւ ապակի նկարով: Կառուցուած է լոգանքի յատուկ խցիկներու համար Bac a Douche et Bainoire:

Մասշեղի գին, տեղադրելը՝ ձրի, երաշխաւորուած աշխատանք:

Դիմել՝ ԹԱԿԵՆՍԵԼԱՅԵԱՆ Հաստատութիւն, Արտ Էլ Պաուշիի, Ըստիկ Շամուն գորտոյայ, հեռ. 03-392088, 03-476018:

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՀԱՅԵՐԵՆԸ՝ ԻԱ. ԴԱՐՈՒ ՄԵՐ ՄԵԾԱԳՈՅՆ ՄԱՐՏԱԿՐԱԿԵՐԸ

ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ՝ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆՍԱՓՈՐՁԻ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ ԵՒ ՄԵՐՈՐԵՆԻ ՀԱՐՅԵՐ

Պօղոս Մնայեանի հրատարակած «ՄԻՋ-ՆԱԲԵՐԴ» տարեգիրքին մէջ 1957ին, բանաստեղծ Մ. Իշխան, պատասխանելով հարցարանի մը, ի միջի այլոց ըսած էր նաեւ հետեւեալը. «Օտար լեզուով գրող հայ հեղինակներու մասին միամուկով յաճախ ըսուած է այն, ինչ որ պէտք է ըսուէր: Անոնք հայ մշակութային Գալաստ չեն բերեր: Բայց երբ Ու. Սարոյեան մըն է գրողը, որուն գործերը հայ ոգիով եւ արիւնով կը բարբառեն, չեն կրնար անտարբեր մնալ: Կը կարդանք, կը սիրենք, կը յուզուինք, կը ցաւինք, կը հպարտանանք: Ա՛յսքան» (էջ 88):

Այդ օրերուն հայերէնի տեղադրութիւնը այսօրուան ծաւալը չունէր: Կային օտարալեզու հայ գրողներ, ինչպէս հիմա: Բայց այդ օրերու դատարարը կը մնայ մեղմունքով, թէ եւ մեր յարմարելու եւ պատշաճելու ճիշդին մէջ, մասնաւոր քաղաքական նկատուածներով, ծնունդ տուած հանրութիւնը չփոխեցնող վերաբերմաններու: Ազգային-համայնքային յարգութեան, նամաչման եւ հպարտութեան աղբիւր կը համարենք օտարալեզու հայ գրողները, բեմադրիչները: Այս անաբական խանդավառութենէն հրաժարուա՞ծ կամ հեռացուա՞ծ մեղանշուա՞ծ կը համարուի, անհարկի գայթակղութիւն:

Ժողովուրդներ դիմացած են նախադրած գեղեցկներու՝ իրենց կենցաղային եւ մշակութային արժէքներով: Ազգային մշակոյթը վարձու կահաւորուած սենեակ չէ: Ո՛չ ոքի համար: Երբ գրականութիւնը ազգային լեզուով չի մշակուիր, հայկական չ'ըլլար: Օտար լեզուով կատարուած եւ հայութեան վերաբերեալ տեսնութեան, քաղաքականութեան, ընկերային հարցերու ուսումնասիրութիւնները օգտակար են, բայց ստեղծագործական մշակոյթ չեն, ունին ժամանակակերպ եւ մասնակի բնոյթ: Գեղարվեստական գրականութիւնը՝ ըլլալով ժողովուրդի հոգիի հայելին, պիտի ըլլայ ազգային լեզուով, քանի որ լեզուն ինք էր կարգին կը բերէ մշակոյթ, պատկերներ, հոգեխառնութիւն, արժէքներ, լինելութեան ապրում: Այս գիտակցութեան զարգացումը, նոյնիսկ ոչ հայաստանի տարածքէն դուրս, կարող էր գրողի մը գրքին համար, ինչպէս կ'ըսեն Հայաստան, շնորհահանգէսներ կազմակերպուին, բառը գիտակցաբար յոգնակի է, մինչդեռ կը բաւէ, որ տեղական լեզուով հայ գիրք գրէ, գինք կը պտուղը չենք քաղարք եւ արուարձան: Միայն չհասկնանք: Օտարալեզու գիրքը կը ծառայէ մեր ծանօթագրման, քարոզչութեան,

պէտք է քաջալերել անոր ցրուումը, որ օգտակար գործ է, մասնաւոր երբ մեր օրինակով օտարներ, ալ կը քաջալերեն, կը գովարանեն, կը կարդան: Պիտի հասկնանք որ հայերէն գրուած գիրքը պիտի ըլլայ մեր ուշադրութեան առարկան: Եթէ այս ճիշդ մենք չընենք, օտարներ պիտի չընեն մեր փոխարէն: Մ. Իշխան յատկութեամբ կ'ըսէ որ հայածնունդ գրողներու օտարալեզու գործերը մեր մշակութային Գալաստ չեն բերեր: Յուշումն ու հպարտութիւնը չեն գուժարուէր ազգային մշակոյթին վրայ: Հետեւեալը արհարկ է հետաքրքրելի հարագատով, այն հարստութեամբ որ մեր գանձարանը պիտի մտնէ, իրեն արժանի թէ ոսկի: Տրամութեամբ կը հաստատենք, որ կը դադրինք ստեղծագործելէ եւ ստեղծագործուածով հետաքրքրուելէ: Չենք խօսիր կողմնապաշտական մեթոդներու եւ անտեսումներու մասին:

Ինչպէս կը նկատուի բացայայտ կերպով, հայկական արտասահմանի մէջ մասնաւոր, ալ դառնանք թէ ձախ, կը հանդիպինք լեզուի հարցին, որուն կարեւորութիւնը կ'ընծայէ փոքրամասնութիւն մը, որովհետեւ որոշում կայացնողներու շրջանակը ընդհանրապէս զբաղած է կառուցներու պահպանմանով եւ քաղաքական համարուած քարոզչութեամբ, յաճախ՝ բանավէճով, ան բարձրաձայն խոստովանութիւն ըլլալով թէ ոչ: Մշակոյթի, գրականութեան, լրագրութեան, հրատարակչութեան, քաղաքական քարոզչութեան եւ դեռ այլ հարցերու համար, համապարփակ եւ սկզբունքային հեռանդրակարներ չունինք: Յաճախ դիտել կը տրուի գանձազան ձեւերով, որ տեղատուութիւնը կը տեսնենք, չըսելու համար՝ խուճապը: Մեր վաղուան յարողութիւններուն այսօրուան եւ վաղուան տոկալու եւ տեւելու առանցքային ուժը, հայ-

կական արտասահմանի մէջ մասնաւոր, հայերէն է, հայերէնով ստեղծուած մշակոյթը, որ մեր ինքնութիւնը կը կերտէ, կը մշակէ մեր տարբեր ըլլալու բնութիւնը: Արեւմտակարգացած ենք բնով ոչ համայնք եւ ոչ ազգ կամ ազգութիւն կը պահուին: Թէ ինչպէս կը յարթահարուէր արգելքներն ու դժուարութիւնները, ալ ինչի՞ր է, զոր պէտք է քննել, բայց առաջին հերթին՝ անհրաժեշտ է գիտակցել հակահին, եւ հակահարկը չէ ստանալ մեր տեղատուութիւններէն:

Մ. Իշխանի խօսքը, իր պարզութեամբ, յատկանշական է. օտար լեզուով արտայայտուողները մեր մշակութային Գալաստ չեն բերեր: Հետեւեալը, եթէ պիտի դիմանանք, մեր մշակոյթին նպաստով այդ պիտի կարենանք ընել: Այդ նպաստը հայերէնով պիտի ըլլայ կամ նպաստ պիտի չըլլայ:

Անգլիացին, ամերիկացին, սպանացին եւ ուրիշներ հայ մարդոց կողմէ չունին իրենց մշակոյթը հարստացնելու համար: Չեն մերժեր, բայց առանց մեզի ալ կրնան ըլլալ: Բազմիցս կոտորակուած մեր ժողովուրդը, եւ մասնաւոր քաղաքացի կոտորակուած մեր մեր ստեղծագործ տաղանդը փոխարինելու եւ վերաշինութեանը կարողութիւնները:

Հին թուղթեր՝ մերօրեայ հարցեր: Ինչ որ կը պակաս այսօր, այս ինչի՞րներուն նկատմամբ խորապէս ազգային վերաբերումն է, ամէնուրեք, քանի որ մեր օրն ու տարին կողողենք սեփական կացութիւններու արդարացումով, նպարավաճառային լուծումներով, եւ առօրեայ մտմտութիւններով, որոնք յաճախ չեղածի իշխանութիւն են:

ՅԱԿՈՒ ՊԱՆԵԱՆ

(Շար. 4)

ԿԱՐԾ ԼՈՒՐԵՐ

«Հայ կամաւորներու միութեան» եւ Բեմպրիճ - Երեւան քոյր քաղաքներու ընկերակցութեան ավակնութեամբ, Թուֆէնկեան հիմնադրամի «Մաքուր Երեւան» ծրագրի շրջագիծին մէջ վերջերս 44 կամաւորներ 10 - 15 հոգինոց խումբերով մաքրած են Երեւանի կարգ մը փողոցները:

Նմանօրինակ ծրագիր պիտի իրագործուի նաեւ 6 Յուլիսին:

30 Յունիսին Ախալքալաքի շրջանի Օլապերդ գիւղին մէջ տեղի ունեցած է գօր. Անդրանիկի մուկուած ձեռնարկ մը:

10 տարի առաջ այս գիւղին մէջ կանգնեցուած էր Անդրանիկի արձանը: Արձանի կանգնեցումէն տասը տարիներ ետք տեղի ունեցած Անդրանիկի մեծարման հանդիսութեան կը մասնակցէին Հայաստանէն եւ Զաւակալի այլ շրջաններէ կեանք հիւրեր:

Այս տարուան 1 Յունիսին մինչեւ 30 Հոկտեմբեր առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ 17:00 Մառնէուլի - Շահումեան սահմանային ճամբուն վրայ պիտի արգիլուի երթեւեկութիւնը:

Երթեւեկութեան այս սահմանափակումները պայմանաւորուած են Մառնէուլի - Մատալիս - Հայաստանի սահմանագիծ ճամբուն 10րդ քիլոմետրին վերանորոգման աշխատանքներուն վերսկսումով:

Վերանորոգման աշխատանքներուն ամբողջ ժամանակաշրջանին Հայաստանի եւ Վրաստանի միջեւ հաղորդակցութիւնը պիտի իրականացուի Թիֆլիս - Մառնէուլի, Կուկուլի - Հայաստանի սահմանագիծ հատուածին միջոցով:

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍ ԱՉԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍ



29 Յունիսին Ազգային Արգարեան վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ նախակրթարանի ամսվերջի հանդիսութիւն:

Քայլերգներու ունկնդրութենէն ետք վարժարանի երգչախումբը ներկայացուց «Հայրիկն հայոց», «Դարձեալ փայլեց», «Մենք պէտք է կուռենք», եւ «Բամբ որոտան» խմբերգները, իսկ Մատլէն Ֆոթթեան եւ Նաթալի Պոզապլեան՝ «Երազ իմ երկիր հայրենին»:

Չ. դասարանէն Մակի Շերնէզեան ու Կարօ Նաչոյեան հանդէս եկան Լա Ֆոնթէնէն Ֆրանսերէն արտասանութեամբ, իսկ Սեւակ Պէրպէրեան՝ Դանիէլ Վարուժանի «Կարմիր Տողը» բանաստեղծութեամբ:

Ապա ներկայացուցաւ «Սասունցի Դաւիթ» Ձոհրայ Եագուպեանի բեմադրութեամբ: Աշակերտները ներկաները փոխադրեցին Սասուն աշխարհ եւ վերակենդանացուցին «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպը:

Հանդէսին յայտագիրը վերջ գտաւ ռազմական պարով:

Վարժարանի տնօրէն Գեղանի Էթեմեզեան անդրադառնալով Սասունցի Դաւիթի ոսկին չտալու դրուագին՝ ըսաւ, թէ նոյնքան հրատապ մտահոգութիւն է այս օրերուն մեր գոյութեան ամէնէն կարեւոր պատենչներուն՝ հայերէնին, հայոց պատմութեան եւ մշակոյթին տէր կանխիկը:

Մրցանակաբաշխութենէն ետք աւարտական դասարանէն իրենց հրաժեշտի խօսքերը փոխանցեցին Կարօ Մենտիճեան՝ արարեղծներով եւ Աւօ Պոյաճեան հայերէնով:

Հանդիսութեան փակումը կատարեց Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Նաչբեան, որ հրաւիրեց ներկաները խորհրածելու դպրոցներուն անփոխարինելի դերակատարութեան, անոնց «տէր կանգնելու» ծնողներու գիտակցութեան եւ անոնց դիմագրաւած դժուարութիւններուն մասին:

Նախակրթարանի վկայականներ ստացան՝ Նիկոլ Բորբոսեան, Կարօ Նաչոյեան, Կարօ Մենտիճեան, Սեւակ Պէրպէրեան, Սեւակ Սալլաքեան, Աւօ Պոյաճեան, Աւօ Քիրէճեան, Լեւոն Չրթիկեան, Նաթալի Գալաճեան, Մարալ Չաքարեան, Քրիստին Թումա, Լիւնտա Նշանեան, Մակի Շերնէզեան, Դաւար Չաքմազեան, Թալին Սայէզ եւ Թալին Քիրէճեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊՈՒՆՏՈՒՆ՝ ԶՈՒԻՅԵՐԻՈՅ ՄԷՋ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան 29 Յունիսին հրամանագիր մը ստորագրած է Զուիցերիոյ մէջ Հայաստանի դեսպանատուն հիմնելու մասին: Նոյն օրը նախագահ Ռ. Քոչարեան հրամանագիր մը ստորագրած է ժընեւի ՄԱԿի գրասենեակին եւ միջազգային այլ կազմակերպութիւններու մէջ Հայաստանի մնայուն ներկայացուցիչ Զոհրայ Մնացականեանը, համատեղութեան կարգով, Զուիցերիոյ մէջ Հայաստանի դեսպան նշանակելու մասին (նստավայրը՝ ժընեւ):

«ԱՉԳԱԿ»-Ի ՀԵՆԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱՉԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

Wedding lists at Galerie Vanlian, you will surely lose your mind...

Galerie Vanlian HOME TRENDS

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՆԹԱՊԼԵԱՆԻ ՄԱՐՈՒՆ ԶԱՌԱՍՈՒՆԵԻՆ ԱՌԻԹՈՎ

«ՀԱԳԳԱ ՊԱՊՈՒԿ»Ը ՈՉ ԵՒՍ Է

Հոգեվարքի մէջ էր Հազգապապուկը: Կապուէր իր կեանքի վերջին ժամերը լուռ, խաղաղ կերպով դիմաւորելով մահը: Վերջին վայրկեաններուն, տարօրինակ ներքին մղումով մը, անկողինին մէջ կը շտկուէր եւ ալ ձեռքը վեր բարձրացնելով, կ'երգէր.



«Կովկասի քաջը, խումբեր կազմեցեր, Քաջ Անդրանիկին օգնութեան հասէր...»

Եւ ապա լուռութիւն: Գաղափարի իր ընկերները գինք հողին յանձնեցին «Վէրքերով Լի» երգով:

Ո՛վ էր այս համեստ Դաշնակցական զինուորը: «Հազգապապուկ» անունով ճանչցուած էր Յովհաննէս Այնթապլեանը՝ ծնած 1907ին, Մուսա լեռան Պիթիաս գիւղին մէջ: Երիտասարդ տարիքին անդամագրուած էր Հ. Յ. Դաշնակցութեան եւ մնացած էր կուսակցութեան հաւատարիմ զինուորը՝ մինչեւ իր մահը, յառաջացած տարիքի մէջ:

Անկեղծ, զոհողութեան բարձր ոգիով յատկանշուած իր ծառայելու ոգին օրինակելի եղած է: Աշխատասէր, շինարար եւ անվախ Յովհաննէս իր մասնակցութիւնը բերած է բոլոր ազգային աշխատանքներուն: Մուսա լեռան գիւղերուն միջեւ կատարած է նամակաբերի խիստ վտանգաւոր աշխատանքը՝ գաղտնի նամակներ հասցնելով տարբեր շրջաններ: Եղած է մուսալեռցի ակաւաւոր դեկավար Մովսէս Տէր Գալուստեանի զինուորներէն: Իր մտերիմ ընկերները եղած են գէնքերն ու փամփոռները:

Կազմած էր հարազատ հայկական ընտանիք՝ բազմանդամ, չորս մանչ եւ երկու աղջիկ զաւակներով: Դժբախտ եղած էր սակայն կորսնցնելով իր չորս մանչերը: Հակառակ կեանքի դժուար իրականութեան, չէր յուսահատած, մասնաւոր մինչեւ իր մահը մնաց պաշտպանը Եւսազոյն դրօշակին, որուն հանդէպ մեծ սէր ունէր եւ յարգանք:

Քիչեր գիտեն իր ազգային գործունէութեան մասին՝ կրակին մէջ նետուող անվախ Դաշնակցականի նկարագրի տիրական դիմին, որ արժեւորեց իր կեանքը իրրեւ հայ եւ դաշնակցական:

Վերջին տարիներուն մնաց իր աղջիկներուն հոգատարութեան եւ խնամքին տակ: Տառապեցաւ Թոռնիկին անփամանակ մահէն, սակայն մնաց լուռ, եւ կեանքէն երբեք չզանգատեցաւ:

«Հազգապապուկ»ը ոչ եւս է: Քառասուն օրեր առաջ անդամ մեկնեցաւ: Մնաց իր գեղեցիկ օրինակը սակայն. վարակիչ է հպարտ հայու ազնիւ յիշատակը:

Երանի թէ մեր երիտասարդները օրինակ առնեն իրմէ եւ իր նմաններէն...

Ե. ՀԱՒԱԹԵԱՆ

ԱՅՆՃԱՐ

ԳԱՐԵԻՆ Բ. - ԹԷՆՏՈՐ ՄԱՔ ՔԱՐԻՔ ՀԱՆԴԻՊՈՒՄ

1 Յունիսին Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոս տեսակցութիւն մը ունեցաւ Ուաշինկթընի արքեպիսկոպոս եւ կաթողիկէ օգնութեան ծառայութեան (Մի. Ար. Էս.) խորհուրդի անդամ Կարտինալ Թէոտոր Մաք Քարիքի եւ անոր ուղեկցող պատուիրակութեան հետ:

Հանդիպման ընթացքին պատուիրակութեան անդամները վեհափառին ներկայացուցած են կաթողիկէ օգնութեան ծառայութեան գործունէութեան հիմնական ուղղութիւնները Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի մէջ:


Վեհափառը կարեւոր նկատած է կազմակերպութեան օժանդակութիւնը հայ ժողովուրդին: Վեհափառը նաեւ նշեց, որ ղարաբաղեան տագնապի խաղաղ լուծումը հայ ժողովուրդի մեծագոյն փափաքն է:

ԵՐԵՒԱՆԻ ԵՒ ՊՈՆԻ ՄՆԱԽԱՂԻ ԹԱՏՐՈՆՆԵՐԸ ԿԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅԻՆ

Երեւանի մշակութի թատրոնի գեղարուեստական ղեկավար Ժիրայր Դադասեան տեղեկացուց, որ թատրոնէն 6 արուեստագէտներ, գերմանական կողմին ֆինանսաւորումով, մէկ ամիս շարունակ ներկայացումներով հանդէս պիտի գան Պոնի մէջ: Ան նաեւ նշեց, որ անկէ ետք Պոնի մշակութի թատրոնի 6 արուեստագէտներ պիտի գան Հայաստան՝ միացեալ ներկայացումներ բեմադրելու համար:

Ժ. Դադասեանին համաձայն, թատրոնը նաեւ հարցեր ունի, որոնցմէ ամէնէն հրատապը կեղծոնատեղիի հարցն է: 4 Հոկտեմբերին կը վերջանայ մշակութի թատրոնի Գեղարուեստի ակադեմիայի շէնքին մէջ վարձակալական հիմունքներով գործելու պայմանաժամը, եւ ակադեմիան այլեւս մտադիր չէ տարածքը նորէն թատրոնին տրամադրելու:

«Իր գոյութեան 20 տարիներուն ընթացքին մեր թատրոնը չէ ունեցած իր սեփական շէնքը եւ բազմաթիւ շէնքեր փոխած է: Ներկայիս նորէն առանց տանիքի մնալու վտանգը կը սպառնայ», ըսաւ թատրոնի գեղարուեստական ղեկավարը:



Գրական Հե

ԳՐՈՂՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ


ԱՐԴԱՐՕՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԵՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ

ԳՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

Անկախ Հայաստանի բազմաշաբաթ, բայց առաւել քան ոգեշնչող հոգիին վրայ, սեւեւ ու սպիտակ իրարու խառնած «անցումային հանգրուան» կոչուած մոխրագոյն ժամանակաշրջանի մը մշտնջենով շրջապատուած, չքաւորութեան, արտագաղթի, տնտեսական ճգնաժամի, բայց մա՛նաւեց մեզ մեզանց հոգեմտաւոր արժէքներու անհարտ գոյութեան սպառնացող ապամշակութային թափանցումներու անհարտութեան ի տես, հայ մշակոյթի եւ ոգիի շահը վառ ու բարձր պահելու հայ գրողի իրենց կոչումին գիտակից՝ Արտեմիդի 15 գաղթօճախներէ դէպի Հայաստան ուղեւորուած շուրջ 50 գրողներ միացան իրենց հայրենաբնակ գրչեղբայրներուն՝ միասնաբար բնեւէլու համար հայ գրականութեան ներկայի եւ ապագայի հիմնահարցերը: «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» ընդհանուր կարգախօսին տակ Հայ Գրողներու Միութեան վարչութեան նախաձեռնութեամբ գումարուած Գրողներու առաջին համահայկական խորհրդողովը (16 - 21 Յունիս) եկաւ ճիշդ ժամանակին, թերեւս յապագայ, բայց ո՛չ ուշացած, հանդիսացաւ հարազատ թարգմանը հայրենի եւ սփիւռքահայ գրագետներուն ամէնէն իրաւ ու ազնուագոյն ապրումներուն եւ եղաւ ո՛չ միայն առաջին, այլեւ՝ առաջնակարգ իրագործում մը:

Ողբը նուաճեց իր հետապնդած նպատակը՝ Հայրենիք - Սփիւռք գրական - մշակութային կապերու ամրապնդման եւ առաւել սերտացման համահայկական տեսլականը խարսխելով ամուր ենթահողի մը մէջ:

Հայ ժողովուրդի հոգեւոր միասնութեան դրօշը բարձր պարգած հայ գրողը, այսպէսով, ո՛չ միայն վերահաստատեց սերունդէ սերունդ կտակուած բարոյական մարտիկի եւ առաջնորդի իր դերը, այլեւ Հայաստանն ու մեր պետական կառոյցները առաջնորդելու հրաւիրուած հայ պետական այրերը նաեւ դրաւ իրենց ազգակերտ ու քաղաքակրթական անյետաճգելի պարտաւորութեանց դիմաց: Բանաձեւեց խորհրդածողովին գաղափարները ամփոփող իր անսակարկելի համոզումներն ու լուռ սպասումները եւ հաստատեց բազմիցս հաստատուած այն բացարձակ ճշմարտութիւնը, որ սատարել հայ մշակոյթին ու գրականութեան՝ կը նշանակէ ամրապնդել հիմքերը պայծառ ու յաղթական մեր գալիքին, հզօր եւ անխոցելի Հայաստանին եւ մէկ ու անբաժան Հայութեան:



Ողջունում եմ Գրողների առաջին համահայկական խորհրդածողովի մասնակիցներին եւ հիւրերին: Հայրենիքն ու Սփիւռքը միմեանց կապող հոգեւոր կամուրջներից մէկը, իսկ որոշակի պատմական ժամանակահատուածներում՝ նոյնիսկ միակը, եղել է գեղարուեստական գրականությունը: Այս առումով առանձնաշատուկ կարեւորություն է ստանում նման ներկայացուցչական կազմով առաջին անգամ հրաւիրուող համաժողովը:

Ծակցութեան բարենպաստ պայմաններում, մեր հասարակութիւնն իր գրողներից ակնկալում է նոր բարձրարժէք գրական երկեր եւ գործուն դերակատարութիւն ազգային խնդիրների լուծման գործում:

Հայ ժողովրդի համար իր բազմադարեան ու հարուստ գրականութիւնը միշտ էլ եղել է աւելին, քան՝ պարզապէս արուեստի ճիւղ: Այն եղել է հայապահպանման ու ազգային գիտակցութեան բարձրացման արդիւնաւէտ միջոց թէ՛ պետականութեան վերականգնման ճանապարհին, թէ՛ յատկապէս օտար փախուստ:

Համոզուած եմ, որ ներկայ խորհրդածողովը հիմք է դնելու նոր աւանդույթի, եւ Հայրենիքի ու Սփիւռքի գրողների ջանքերի համատեղումը բացելու է մեր գրականութեան ու մշակոյթի պարզացման նոր հորիզոններ:

Այսօր՝ Հայրենիք - Սփիւռք մշակութային համագործակցութեան համաժողովում, մեր հասարակութիւնն իր գրողներից ակնկալում է նոր բարձրարժէք գրական երկեր եւ գործուն դերակատարութիւն ազգային խնդիրների լուծման գործում:

Հայ գրողներին մաղթում եմ ստեղծագործական յաջողութիւններ, իսկ խորհրդածողովին՝ արգասաբեր աշխատանք:

Հայրենիքի համար իր բազմադարեան ու հարուստ գրականութիւնը միշտ էլ եղել է աւելին, քան՝ պարզապէս արուեստի ճիւղ: Այն եղել է հայապահպանման ու ազգային գիտակցութեան բարձրացման արդիւնաւէտ միջոց թէ՛ պետականութեան վերականգնման ճանապարհին, թէ՛ յատկապէս օտար փախուստ:

Այսօր՝ Հայրենիք - Սփիւռք մշակութային համագործակցութեան համաժողովում, մեր հասարակութիւնն իր գրողներից ակնկալում է նոր բարձրարժէք գրական երկեր եւ գործուն դերակատարութիւն ազգային խնդիրների լուծման գործում:

Ռ.ՊԵՐՔՐՔ ԲՈՉԱՐԵԱՆ
Հայաստանի Հանրապետութեան նախագահ

Երևան, 15 Յունիսի 2002 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Երևան, 16 Յունիս 2002 թ.

Հոգու բերկրանքով Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր օրհնութիւնն ու ողջոյն ենք բերում Հայաստանի Գրողների Միութեան եւ Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի նախարարութեան համատեղ ազնի նախաձեռնութեամբ գումարուող աշխարհի հայ գրողների յոբելեանական առաջին համաժողովի բոլոր անդամներին:

Դուք հայ գրչի ազնի մշակներն էք այսօր մեր ժողովրդի ստեղծագործական ոգու հոգեւոր անդամաւոր, որ իւրաքանչիւր ձեռք բնակութեան վայրում՝ ի Հայաստան, Արցախ եւ ի Սփիւռք, արդիւնաւորում էք ձեր տաղանդը եւ փառք յաւելում հիմաւորցնում մեր ազգի հոգեմտաւոր ժառանգութեանը:

ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

16 Յունիս 2002, Երևան

Յանուս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան վեհափառ հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսին, շերտօրէն կը շնորհաւորենք Հայաստանի Գրողներու Միութիւնը եւ մշակոյթի ու երիտասարդութեան հարցերու նախարարութիւնը այս եզակի եւ առջինն ծախսաւորութեան առիթով:

Հայաստան - Սփիւռք գործակցութեան շրջագծին մէջ, յատկապէս մշակութային համագործակցութեան սթոյնը լինելով մէջ, հայ գրողներու համահայկական խորհրդածողով գումարելու ձգտումը ուրիշ իմաստ, իւրաքանչիւր նպատակ եւ առաջնութիւն նշանակութիւն ունեցող կարեւոր իրադարձութիւն է:

